ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025թ.-ի հոկտեմբերի 16-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35

Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց ՓԲ ընկերության կարիքների համար արբանյակային ընդունիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.10.2025թ.-ին ս.թ. հոկտեմբերի 10-ից 16-ը ընկած ժամանակահատվածում ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ տրամադրած պարզաբանումները՝

Հարցում 1

Հարգելի գործընկերներ, խնդրում եմ տալ պարզաբանում , ինչ է նշանակում մատակարարման պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, եթե կիրառելի է : Եթե կիրառելի է- արտահայտությունը, արդյոք այն նշանակում է որ դուք կընդունեք ապրանքը նաև առանց սերտիֆիկատի կամ նամակի, թե այն պարտադիր է և պետք է ներկայացվի?

Պարզաբանում 1

Հարգելի մասնակից, Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի ընդհանուր պահանջների՝ մասնակիցը պետք է պայմանագրի կատարման փուլում ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Հարցում 2

Հարգելի գործընկեր, Խնդրում ենք տալ պարզաբանում. Բնութագրի մեջ նշված է հետևյալ կետը՝ LNB բևեռացումը՝ 0Վ, 13Վ, 18Վ ընտրովի: Խնդրում ենք ճշտել՝ արդյո՞ք սա վրիպակ չէ, քանի որ բազմաթիվ արտադրողներ նշում են, որ տվյալ պարամետրը պետք է լինի առանց 0Վ արժեքի: Այսինքն՝ ճիշտ տարբերակը պետք է լինի՝ LNB բևեռացումը՝ 13Վ, 18Վ ընտրովի: Եթե այո, խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխությունները հրավերի մեջ:

Պարզաբանում 2

Հարգելի մասնակից, Տեխնիկական բնութագրում նշված 0Վ - ը, նշանակում է լարման բացակայում: Որոշ արտադրողների մոտ կարող է առկա լինել "0" արժեքը, որոշների մոտ՝ "OFF" արժեքը: Երկու դեպքում էլ այն նշանակում է լարման բացակայում: Տվյալ ընտրության հնարավորությունը պետք է առկա լինի արբանյակային ընդունիչում՝ համաձայն տեխնիկական բնութագրի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մարինա Նիկոլյանին:

Հեռախոս՝ 010 65 40 73

Էլ. փոստ՝ marina.nikolyan@tna.am

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով